

# ՀԱՅ ՄԻՆՉԿԵՂԱՓՈՒՍԿԱՆ ԶՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ Մ. Ե. ՍԱԼՏԻԿՈՎ-ՇՅԵՂԻՆԻ ՍԱՄԻՆ

## Ա. Ս. ԱԹԱՆԵՍՅԱՆ

Մ. Ե. Սալտիկով-Շչեղրինը ռուս գրականության այն դասականներից է, որոնց ստեղծագործությունը դեռևս կյանքի օրոք դուրս է եկել ազգային շրջանակներից և դարձել շատ ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի սեփականությունը՝ ի դեմս որի մեծ երգիծաբանի գործերը միշտ գտել են իրենց երախտապարտ և շահախնդիր ընթերցողին:

Շչեղրինի խոսքը հայերեն հնչեց դեռ հեղինակի կենդանության ժամանակ: 1884 թվականին «Գործ» ամսագրում (Թիֆլիս) լույս է տեսնում «Անձնագրի նապաստակը» հեքիաթը՝ Ալ. Շիրվանզադեի թարգմանությամբ, իսկ Ա. Ծատուրյանի թարգմանած «Հարության գիշեր» հեքիաթը նույն թվականին տպագրվում է Մոսկվայում՝ «Հանդես գրական և պատմական» պարբերականում:

Ինչպես գրողի 135-ամյա տարեդարձի առիթով նշում է քննադատ Վ. Վարդանյանը, «Շչեղրինի առաջին հայ թարգմանիչները անհայտ, պատահական անձնավորություններ չէին, այլ ժամանակի առաջավոր գաղափարներով ոգեշնչված անվանի գրողներ»<sup>1</sup>:

Առաջադեմ հայ ընթերցողին հարազատ էր հասարակական և մարդկային արատները անողքաբար մերկացնող, քաղաքական կյանքի խոցերը վերհանող Շչեղրինի սուր, խարազանող երգիծանքը: Միև նույն ժամանակ, հեքիաթային ժանրը գրավում էր ընթերցողին իր դեմոկրատական ոգով, ժողովրդական հնչողությամբ, մատչելիությամբ, գեղարվեստական կատարելությամբ:

Շչեղրինի մասին հայերեն առաջին վերլուծական-կենսագրական հոդվածը պատկանում է հայտնի հրապարակախոս և հասարակական գործիչ, «Մշակ» թերթի հիմնադիր և առաջին խմբագիր Գրիգոր Արծրունու գրչին: «Մի մեծ ռուս գրողի մահը» վերտառությամբ իր հոդվածով Արծրունին 1889 թվականին արձագանքեց հոշակավոր երգիծաբանի մահվանը:

Հոդվածի սկզբում Արծրունին, ծանոթացնելով հայ ընթերցողին Շչեղրինի կենսագրականին, այնուհետև հետևյալ բարձր գնահատականն է տալիս նրա ստեղծագործությանը. «Արդեն 1856 թվից սկսած, երբ Շչեղրինը Վյատկայից կրկին վերադառնում է Պետերբուրգ, սկսում են երևալ նրա երգիծաբանական գրվածները, որոնք և անմահացրին հանգուցեալի անունը ռուս գրականության մեջ: Երեսուն տարի շարունակ Շչեղրինը իր կծու, դիտող գրչով անընդհատաբար արթնացնում էր ռուսաց հասարակաց կարծիքը նրա սովորական թմրափունից, արձագանք էր տալիս բոլոր ընթացիկ հասարակաց խնդիրներին, իր թարմացնող, սթափեցուցիչ գործը ձայնը բարձրացնելով ընդհանուր հետադիմության, ռեակցիայի հոսանքում»<sup>2</sup>:

Մի շարք դիպուկ և հետաքրքիր դիտողություններ անելով գրողի ստեղծագործության վերաբերյալ՝ Արծրունին հիանում է կյանքի բոլոր անցուդարձերին, հասարակական արդի խնդիրներին, նրբազգացորեն անդրադառնալու Շչեղրինի հատուկ ընդունակությամբ՝ միաժամանակ չկորցնելով մտքի թարմությունը, մշտապես մնալով առաջադեմ գաղափարների համախոհը: Այդ առումով Արծրունին Շչեղրինին նմանեցնում է Տուրգենևին, գտնելով, որ վերջին ժամանակներում միայն այդ երկու հեղինակները կարողացան Ռուսաստանում երբեք վայր չղնել առաջադիմության դրոշը:

<sup>1</sup> Վ. Վարդանյան, Սալտիկով-Շչեղրինը և հայ գրական հասարակական միտքը, Հայկ. ԽՍՌՆԳՄ Արխիվային վարչություն, Գիտա-ինֆորմացիոն բյուրոն, Երևան, 1961, N 1, էջ 34:

<sup>2</sup> «Մշակ», Թիֆլիս, 1889, N 49, էջ 2: Մեջբերումներում պահպանված են բնագրի լեզուն և ուղղագրությունը:

Արծրունին ի հայտ է բերում ռուս գրականության փայլուն իմացություն, ստույգ ձևակերպում շչեղրինյան ստեղծագործության հիմնական գաղափարական ուղղվածությունը և միաժամանակ ներկայացնում նրա ընդհանրացված բնութագիրը՝ Շչեղրինին պատշաճ տեղ հատկացնելով ռուս գրականության մեջ: «Ռուս սատիրան, ռուս երգիծաբանական գրական ձևը Շչեղրինից առաջ երբեք չէր հասած այն վեհ ընդարձակության, երբեք այդքան խոր կերպով չէր թափանցել, չէր մտել ժողովրդի բոլոր խավերը, որպես այդ կարողացել է անել երեսուս տարի շարունակ Շչեղրինի մերկացնող, անխնայ մտրակող սատիրան:

Շատերը ռուս նշանավոր գրողներից մի հայտնի հասակում հոգնում են, դադարում են մաքառել, համոզվելով որ անկարող եղան հաշտեցնել իրանց իդեալները իրականության հետ,— և կամ իջնում են ասպարեզից դեռ կենդանության ժամանակ, կամ միստիկներ, սկեպտիկներ են դառնում... Բայց հանգուցյալ Շչեղրին, ինչպես և հանգուցյալ Տուրգենև, մինչև մահվան ընթացքում մնացին թարմ, իրանց իդեալներին հավատարիմ, մնացին գրականության մեջ առաջադիմական թարմ ոգու, երիտասարդական գաղափարների դրոշակիրներ»<sup>3</sup>:

Իր գրական արժեքով, իմաստավորվածությամբ Արծրունու հոդվածը վաղուց արդեն դարձել է հայ քննադատության ուսումնասիրության առարկա: Այսպես, Ռ. Հովհաննիսյանը նշում է. «Բարձր գնահատելով հանճարեղ գրողի ձիրքը, լիբերալ Արծրունին սակայն չնշեց և չէր էլ կարող նշել նրա ստեղծագործության հեղափոխական-դեմոկրատական պաթոսը, որին նա ընդհանրապես թշնամաբար էր վերաբերվում»<sup>4</sup>:

Նման եզրակացության հետ չի կարելի լիովին համաձայնել: Արդարև, Արծրունու հոդվածում բացակայում է սովետական գրականագիտական դպրոցի նախասիրած «հեղափոխական-դեմոկրատական» ձևակերպումը, սակայն Մալտիկով-Շչեղրինի ստեղծագործության իմնարար պաթոսը հրապարակախոսն ընկալել և սահմանել է անհերքելի ճշմարտացիությամբ: Հատկապես այդ պաթոսի և ոչ թե երգիծաբանի երկերի գեղարվեստական յուրօրինակության վրա է բևեռում Արծրունին իր ուշադրությունը՝ շեշտելով գրողի լիակատար անկախությունը քաղաքական կուսակցություններից և ժամանակի հասարակական հոսանքներից:

Հոդվածագիրը կրթության մասին է գալիս այն քննադատների դեմ, որոնք հանդիմանում էին Շչեղրինին չափից ավելի սուր լեզվի համար. «Շատերը մեղադրում են Շչեղրինին նրա խիստ լեզվի պատճառով, անվանելով նրա ոճը հայոյական և անվայել... Այդ հին երգը թողնում ենք խավարամիտներին և թթամիտներին ազատորեն երգելու... Շչեղրին, ինչպես ամեն զգայուն գրող, չէր կարող ժամանակակից ապականությունը, ախտերը և թթամությունը չը դրոշմել իր գեղվածքներում իրանց պատշաճ անվանակոչություններով»<sup>5</sup>:

Վերոհիշյալ հոդվածում Վ. Վարդանյանը հետևյալ կերպ է մեկնաբանում քննադատի այդ միտքը. «Չնայած Գ. Արծրունին չկարողացավ հասկանալ, որ տիրող կարգերի դեմ իր խոր գայրույթն ու ցատունն արտահայտելու համար ցարական ոճի մի դաժան մթնոլորտ է թելադրել Շչեղրինին դիմելու եզոպոսյան ոճին, բայց և այնպես, հայ հրապարակախոսը արդարացնում է ռուս վիպասանին և միանգամայն օրինաչափ երևույթ է համարում նրա կողմից ռուսական նեխած իրականությանը կծու լեզվով ծաղրելու եղանակը»<sup>6</sup>:

Այս մեկնաբանության վերաբերյալ տեղին է նշել, որ Արծրունին ամենևին էլ Մալտիկով-Շչեղրինի եզոպոսյան ոճի օգտագործման խնդրի վրա միայն չի սևեռում իր ուշադրությունը: Իրականում նա գտնում է, որ գրողի արտահայտությունների չափազանց կտրուկ ձևը լիովին արդարացված է՝ ելնելով գրողի առջև ծառայած խնդիրներից: Պետք չէ մոռանալ, որ Արծրունու հոդվածը և ս գրվել է ցարական գրաքննության ոչ այնքան «մեղմ» պայմաններում, բայց, չնայած դրան, աչքի է ընկնում դատողությունների և գնահատականների անկախությամբ և համարձակությամբ: Հոդվածի եզրափակիչ տողերը մեկ անգամ և ս հաստատում են այն մեծագույն գնահատականը, որ հայ քննադատը տվել է ռուս գրողին. «Շչեղրինի մահը մի անուղղելի հարված է ռուս գրականության համար... գրողից իր անհասանելի բարձրությունից մի գրականական հսկայ...»<sup>7</sup>:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Ռ. Օղանյան, Из истории оценки русской литературы армянской общественной мыслью, Ереван, 1951, էջ 62—63:

<sup>5</sup> «Մշակ», Թիֆլիս, 1889, N 49, էջ 2:

<sup>6</sup> Վ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 35:

<sup>7</sup> «Մշակ», Թիֆլիս, 1889, N 49, էջ 3:

1939 թվականին գրականագետ Վ. Թերզիբաշյանը հետևյալ կերպ է քննադատել Գ. Արծրունու հոդվածը. «Պետք է նկատել, որ նման քարձր գնահատական Սալտիկով-Շչեդրինի մասին հազվադեպ է եղել իր ժամանակի մամուլում»<sup>8</sup>:

Գրողի մահվան կապակցությամբ լույս տեսած, ըստ էության մահախոսականի բնույթ կրող այդ հոդվածը չէր կարող պարունակել գրողի ստեղծագործության լիակատար վերլուծությունը, սակայն քննադատը զարմանալի ստույգությամբ է զգացել շչեդրինյան արձակի ոգին, մի քանի քառով կարողացել է օրյեկտիվ ու խորաթափանց քնորոշել դրա էությունը և հիմնական ուղղվածությունը:

Այս ամենի հետ մեկտեղ հոդվածի պատկերավոր, հուզական և անկաշկանդ լեզուն, նրա անմիջականությունը, ոճական և կառուցվածքային միասնականությունը, ուր ցայտուն կերպով դրսևորվեցին հայ ակնառու քննադատի տաղանդն ու անհատականությունը, պայմանավորեցին, որ հոդվածը, լինելով առաջինը իր տեսակի մեջ, առայսօր, ըստ մեզ, մնում է ռուս երգիծաբանին նվիրված լավագույն հոդվածներից մեկը հայ քննադատական գրականության մեջ:

1889 թվականի մայիսի 4-ին Արծրունու հոդվածի լույս ընծայումից երկու օր հետո, «Մշակ» թերթը զետեղում է ծավալուն և բովանդակալից մի գրախոսական, որի ստեղծման դրդապատճառը, հեղինակի վկայությամբ, Սալտիկով-Շչեդրինի մահվան բոթն էր: Խ. Մ. սկզբնատառերով ստորագրված (ինչ, հավանաբար, նշանակում է Խ. Մալումյան) այս հոդվածը, որը կրում է «Դատարկ տեղ հայ գրականության մեջ» վերտառությունը, պարունակում է հետաքրքիր խորհրդածություններ հայ հասարակական կյանքում ռուս գրականության տեղի և նշանակության մասին: «Դատարկ տեղ» է համարում հեղինակը այն բացը, որն անուղղակի վնաս է հասցնում ամբողջ հայ գրականությանը և որը պետք է լրացնեն ռուս գրականությունից կատարվելիք թարգմանությունները: Այդ թարգմանությունների հրամայական պահանջը հոդվածագիրը բացատրում է հետևյալ կերպ. «Ռուս գրականության մեջ, մանավանդ 60-ական թվականներին և թե նրանից հետո, արծարծվել են այնպիսի խնդիրներ, հարուցվել են այնպիսի մտքեր, որոնց հետ ծանոթանալը և որոնց հասկանալը մի կարիք է մեր կյանքի համար: Մեր և ռուսաց կյանքի մեջ շատ ընդհանուր հարցեր կան, և մեր մամուլը, երիտասարդությունը և ինտելիգենցիան բարոյական ոչ մի իրավունք չունենին և չունեն իրանց աչքերը փակելու և չը տեսնելու, թե ինչպես են մշակվում ռուսաց գրականության մեջ այդ մեզ համար էլ ընդհանուր հարցերը»<sup>9</sup>:

Հեղինակը գտնում է, որ ռուս պարբերական մամուլի լավագույն էջերում և առաջավոր գրողների ստեղծագործության մեջ արծարծվող տմեսական, քաղաքական և այլ կարգի խնդիրները այսօր դեռ ծանոթ չեն հայ ընթերցողին: Այլպես, դրանց թարգմանության առկայության դեպքում, ռուս առաջավոր մտքի դրույթները կարող էին հարուստ նյութ դառնալ հայ գրականության համար: Սակայն հայ ընթերցող հասարակայնությունը ծանոթ չէ նույնիսկ այնպիսի գրողների ստեղծագործությանը, ինչպիսիք են Բելինսկին, Դորրոյուրովը, Նեկրասովը, Չերնիշևսկին, Պիսարևը, Շչեդրինը... Թվարկած գրողների անունները, որոնց քննադատը միևնույն դպրոցին է վերագրում, ինքնին խոսում են և ակնհայտ կերպով ապացուցում են թերթի առաջադեմ ուղղվածությունը. «Մեռնում է դիցուք Տուրգենևի կամ Շչեդրին, — շարունակում է հոդվածագիրը, — և հիս հայ երիտասարդության և հայոց ինտելիգենցիայի առաջադեմ կուսակցությունը մեր մամուլի առաջադեմ մասի հետ միասին անկեղծ վիշտ է արտահայտում այդպիսի կորուստի համար, բայց ընթերցող հասարակությունը միանգամայն անընդունակ և անկարող է լինում հասկանալու, թե ինչի մեջ է այն կորուստը և թե որքան մեծ է այդ վիշտը, որովհետև նա անծանոթ է այն իդեալներին և գաղափարներին, որոնց ծառայել են այդ մարդիկ և որոնց համար նրանք իրանց կյանքը մաշել են»<sup>10</sup>:

Հոդվածի վերջում հեղինակը հույս է հայտնում, որ «մեր թարգմանիչները, և թե ամսագիրները և նույնիսկ «Հրատարակչական ընկերությունը» կաշխատեն սրանից հետո հայ գրականություն մատակարարելու ռուսաց գրականության մեջ պարունակված գանձերը, իսկ դա կլինի մի քավական մեծ ծառայություն»<sup>11</sup>:

«Մշակ» թերթը 1889 թվականի մայիսի 11-ի համարում մամրամասն տեղեկություններ է

<sup>8</sup> Վ. Թերզիբաշյան, Հայ մամուլը Շչեդրինի մասին, «Գրական թերթ», 1939, 25 մայիսի:

<sup>9</sup> «Մշակ», Թիֆլիս, 1889, N 50, էջ 2:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Նույն տեղում:

հայտնում Մանկտ-Պետերբուրգում մայիսի 2-ին տեղի ունեցած գրողի հուղարկավորության մասին, իսկ մայիսի 14-ի համարում զետեղում է մի մեջբերում այն նամակից, որը մահվանից մի քանի օր առաջ Շչեդրինն ուղղել է որդուն և որն ըստ էության գրողի գրական պատգամն է. «Ամենից շատ սիրիր քո մայրենի գրականությունը և գրականագետի կոչումը նախադասիր բոլոր մյուս կոչումներից»<sup>12</sup>:

Սալտիկով-Շչեդրինի մահվանը արձագանքեցին նաև Թիֆլիսի բանվորները, որոնք թվում, անկասկած, եղել են նաև հայերը: Գրողի այրում ուղղված նրանց նամակում կան հետևյալ տողերը. «Միխայիլ Եվգրաֆովիչի մահը վշտացրեց բոլոր նրանց, ովքեր երջանկություն են ցանկանում իրենց հայրենիքին: Ի դեմս նրա Ռուսաստանը զրկվեց ճշմարտության և ազատության լավագույն, արդարացի և եռանդուն պաշտպանից, չարի դեմ պայքարող մարտիկից, որն իր ուժեղ բանականությամբ ու խոսքով արմատից հատում էր չարիքը: Եվ մենք, բանվորներս, սիրել և գնահատել ենք նրան»<sup>13</sup>:

Հայ երիտասարդության շրջանում Շչեդրինի ստեղծագործության ժողովրդականության մասին է վկայում նաև «Աղբյուր» ամսագրի՝ 1889 թ. տպագրված հոդվածը. «Շչեդրինը մեծ ծառայություն է մատուցել իր կծու, ծաղրական, բայց զեղարկվեստական գրվածքներով ոչ միայն ռուս ժողովրդին, այլև մեր երիտասարդությանը, որը սիրով է կարդում նրա աշխատությունները»<sup>14</sup>:

Այն, որ հայ պարբերական մամուլը բավականին հաճախ և սիրով է անդրադարձել ռուս գրականության խնդիրների լուսաբանմանը ընդհանրապես, վկայում է քննադատ Երվանդ Ղազարյանցի՝ «Մուրճ» ամսագրում 1891 թվականին տպագրած «Մոռացված խոսքեր» հոդվածը, որը նկիրված է Տոլստոյի ստեղծագործությանը, նրա լուսավորչական հայացքներին: Հատկանշական է, որ հեղինակը հոդվածը վերնագրել է այնպես, ինչպես Սալտիկովը իր վերջին անավարտ ստեղծագործությունը: Այդ հոդվածում գրողի բարոյական դիրքորոշմանը տրվում է բարձր գնահատական. «Տոլստոյի նման մի այլ ականավոր տաղանդ՝ Շչեդրին, իր մահվանից առաջ հիշեցրեց ռուս հասարակությանը մի քանի «մոռացված խոսքեր», որոնք են՝ ճշմարտություն, սեր, առաքինություն, հայրենասիրություն և այլն: Իհարկե, Շչեդրին բոլորովին այլ կերպ էր նայում այդ բարոյական հասկացությունների վրա, քան թե Տոլստոյը, բայց հետաքրքիրը այն է, որ այդ երկու ռուս հսկաներն էլ՝ հավասարաչափ ուժով ու տաղանդով՝ հարկավոր են համարում՝ միևնույն ժամանակ և միևնույն պայմանների մեջ, հիշեցնել մարդկությանը, որ աշխարհիս երեսին սեր կա, ճշմարտություն կա, խիղճ կա, մարդասիրություն, հայրենասիրություն և այլ բարձր գաղափարներ կան, որոնք մոռացված են այժմ, որոնք առ ոչինչ են համարվում՝ այժմյան գրական և հաշվազետ դարում»<sup>15</sup>:

Հայ հասարակական շրջանակներում երգիծաբանի աճող ժողովրդականության մասին են վկայում այն փաստերը, որ սկսած 1891 թ. Թիֆլիսի Հայ հրատարակչական ընկերությունը ձեռնարկում է նրա ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների տպագրությունը: Բոլոր այդ ստեղծագործությունները հեքիաթներ էին՝ բացառությամբ «Գյուղական վարժուհի» վիպակի, որը «Մուրճ» ամսագրում արժանացավ Արասխանյանի խիստ բացասական գրախոսականին: Մանրամասն շարադրելով վիպակի բովանդակությունը, քննադատը «վնասարար» է գնահատել այս ստեղծագործությունը հայ ընթերցողի համար. «Այս գրքույկը աններելի գրպարտություն է հազարավոր այն գյուղական վարժուհիների համար, որոնք տարիներով գյուղերում վարժուհիություն են անում և, չբավականանալով դասարանական պարապմունքներով, ազնվաբար մաքառում են ժողովրդի տգիտության դեմ, աշխատելով բարոյապես ազդել գյուղի հասակավորների վրա: Ի սեր Աստծու նկարագրեցեք իրերի իսկական դրությունը, իսկական արգելքները, բայց միք գրպարտիլ:

Եվ թարգմանիչը կարծում է, որ իր պատիվը ճանաչող մի օրիորդ, եթե հավատալու լինի՝ վերև նկարագրված սարսափներին, կցանկանա՞ գյուղական վարժուհի դառնալ: Մեր ժողովրդական ընթերցանության համար նշանակված հրատարակությունների շարքում այս գրքույկը աննպատակ է և ոչ ցանկալի»<sup>16</sup>:

<sup>12</sup> «Մշակ», Թիֆլիս, 1889, N 54, էջ 3:

<sup>13</sup> «Литературное наследство», т. 13—14, М., 1934, с. 222.

<sup>14</sup> «Աղբյուր», 1889, N 5—6, էջ 76:

<sup>15</sup> «Մուրճ», 1891, N 12, էջ 1568—1569:

<sup>16</sup> «Մուրճ», 1891, N 6, էջ 785:

Շչեղդիհի թարգմանությունների մեկ այլ ժողովածուի հրատարակման պատմության մասին մանրամասն տեղեկություններ ենք քաղում Վ. Վարդանյանի վերը նշված «Սալտիկով-Շչեղդիհի և հայ գրական հասարակական միտքը» հոդվածից: Հայաստանի պետական կենտրոնական արխիվում պահվում են Թիֆլիսի «Հայերեն գրքերի հրատարակչական ընկերության» վավերագրերը: Ընկերության խմբագրական մասնաժողովը, որի կազմում էին Մ. Արեւյանը, Լեոն, Փ. Վարդանյանը և ուրիշներ, բարձր գնահատելով մեծ երգիծաբանի հեքիաթները, որոշում է լույս ընծայել դրանք առանձին գրքով՝ նախապես մամուլում հաղորդագրություն տպագրելով այդ մասին: 1891 թ. Կարսից Մինաս Ղազարյանը ընկերությանն է ներկայացնում Շչեղդիհի երեք ստեղծագործությունների թարգմանությունները, որոնք գրախոսել էր Լ. Սարգսյանը: Վերջինս բարձր է գնահատել ստեղծագործությունները, իսկ թարգմանությունը բնութագրել է հետևյալ կերպ. «Թարգմանության լեզուն շատ հաջող և կանոնավոր է: Երեք գրվածքները կարելի է ամփոփել մի հատորում և տպագրել»<sup>17</sup>:

1891 թ. հրատարակված այդ գրքի լույս ընծայման առիթով, ուր գետեղված էին «Մոռացկոտ ոչխարը», «Չատկի գիշերը», «Ազատամիտը» հեքիաթները, Արասխանյանը տպագրում է իր կարծիքը: Հարազատ իր գրելաձևին, քննադատը սկզբում բարեդիմադրեմ շարադրում է գրախոսվող նյութի բովանդակությունը, սպա տալիս է դրա գնահատականը: Նրա կարծիքով, «Մոռացկոտ ոչխարը» հեքիաթը, արտացոլելով ռուս հասարակության կյանքի անցած շրջանը, ունի առավելապես պատմական արժեք: Առավելապես, «որովհետև մարդկային իարաբերությունները, հայացքները այնքան շուտ չեն փոխվում և գրվածքը մի որոշ չափով ներկայացնում է ժամանակակից հասարակությունը»<sup>18</sup>:

Ըստ քննադատի, ավելի արդիական հնչեղություն ունի «Ազատամիտը» հեքիաթը: Այդ հեքիաթի մասին նա մասնավորապես գրում է. «Գրվածքի միտքն է՝ ցույց տալ, թե ո՞ր է տանում ինդեպերի աստիճանաբար գիշելը, թե ինչ սարսափելի ընդդիմադրություն է ցույց տալիս այդ երկրի հասարակությունը մի այնպիսի գործիչի, որը շատ սահմանափակ և որ զլխավորն է «որքան հնարավոր է» պրինցիպով է մտնում կյանքը: Եվ չափազանցված ու սև գույներով ներկած պատկերը այնքան էլ հեռու չէ օրիգինալից»<sup>19</sup>:

Ընդհանուր առմամբ Արասխանյանը ողջունում է գրքի լույս ընծայումը՝ հատկապես ուշադրություն դարձնելով Ղազարյանի թարգմանությունների որակին: Նա առաջիններից էր, որ ուշադրություն հրավիրեց Սալտիկով-Շչեղդիհի արձակ գործերի դժվար թարգմանության վրա. «Ինչ վերաբերվում է թարգմանական լեզվին, լեզուն բավականին լավ է, չը նայելով այն դժվարություններին, որ ներկայացնում է Շչեղդիհի թարգմանությունը»<sup>20</sup>:

Բարձր գնահատելով թե Շչեղդիհի հեքիաթները, թե Ղազարյանի կատարած թարգմանությունները՝ 1892 թվականին Արասխանյանն իր ամսագրում տպագրում է «Ինդեպերստ ծածանը», «Իմաստուն ծանծղուկը» և «Խիղճը կորավ» գրվածքները, որոնք նույն թվականին լույս են տեսնում առանձին գրքով:

Վ. Վարդանյանի՝ վերոհիշյալ հոդվածում հետաքրքիր տեղեկություններ են քերվում այն բանավեճի մասին, որ ծավալվում է մամուլում Սալտիկով-Շչեղդիհի հայերեն թարգմանությունների շուրջ: Վրաստանի պետական կենտրոնական արխիվի նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հոդվածի հեղինակին հրապարակելու հետևյալ փաստերը: Թիֆլիսում հրատարակվող «Կովկաս» թերթը, դեմ լինելով ռուս գրականության ստեղծագործությունները Կովկասի ժողովուրդների լեզուներով թարգմանելուն և տպագրելուն, հրապարակում է ո՞նց Ստարցևի հոդվածը, ուր ասվում է, որ «Հայ ինտելիգենցիան չպետք է մտահոգվի ռուս գրողների ստեղծագործությունների տպագրության հարցերով»: Այս միտքը դուր չի գալիս հայ մտավորականներից շատերին: Ի պատասխան Ստարցևի՝ «Մուրճ»-ը ցանկանում է տպագրել Լ. ստորագրությամբ «Հայ ինտելիգենցիայի փաստաթանը» հոդվածը, որտեղ հեղինակը խիստ քննադատում է ռուս ազգամոլին և ավելացնում, որ «Չենք կարող ասել, թե Տոլստոյը, Սալտիկովը միայն ռուսների համար են գրել: Նրանք պատկանում են բոլոր ազգերին: Մակայն ո՞վ պետք է ծանոթացնի հային Տոլստոյի հետ, վրացուն՝ Սալտիկովի հետ, Տուրգենևին՝ աղբրեջանցու հետ:

17 Վ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 35:

18 «Մուրճ», 1891, N 12, էջ 1590:

19 Նույն տեղում:

20 Նույն տեղում:

Իհարկե, ինտելիգենցիան»<sup>21</sup> :

Չնայած հողվածն արդեն շարված էր և պատրաստ էր տպագրության, սակայն Կովկասի ցենզուրան արգելում է :

Գրաքննության խիստ վերաբերմունքի հետևանքով 1905—1907 թթ. արգելվում են հայ պարբերական մամուլում տպագրության ներկայացված Ընդդիմի «Խճճված գործ», «Նքիաք փութեռանդ պետի մասին», «Արջը՝ կուսակալ», «Գյուղական հրդեհ», «Բորենի» ստեղծագործությունները :

Այնուամենայնիվ, թեև շատ փոքր թվով, բայց Սալտիկովի ստեղծագործությունները շարունակում էին լույս տեսնել հայերեն : Այսպես, 1892 թ. Մոսկվայում հրատարակվում են «Ամենամաստուն տառեխը» և «Չիհշող խոյը» հեքիաթները : 1893 թ. «Նոր դար» թերթը տպագրում է «Վայրենի կալվածատերը», իսկ «Մուրճ» ամսագիրը 1896 թ.՝ «Լիբերալը» հեքիաթները :

«Տարազ» ամսագրում 1897 թվականին լույս է տեսնում Սալտիկով-Ընդդիմի «Մոռացված խոսքեր» անավարտ գործը :

«Տարազ» պատկերազարդ ամսագիրը, նշելով մեծ գրողի մահվան 10-ամյակը, շապիկի վրա զետեղում է Ընդդիմի դիմանկարը, իսկ համարում՝ մի հողված, որտեղ տալիս է գրողի ստեղծագործության, մեր կարծիքով, առնվազն վիճելի գնահատականը, երբ գրում է. «Ընդդիմը համամարդկային գրող չէր և ոչ մի վիպագիր, որի գրվածքներն սրտատրոփ ընթերցողի սիրտը բաբախեցներ, նրան հեղինակի հերոսների հետ մինչև երկինք բարձրացներ, կամ վշտահար աներ, հերոսուհու անմխիթար վիճակը տեսնելով»<sup>22</sup> :

Մինևույն ժամանակ հողվածագիրն իրավամբ գտնում է, որ որպես երգիծաբան Ընդդիմը փայլուն կատարել է իր խնդիրը : «Ընդդիմը մի օպերատոր էր, — գրում է նա, — նա ծակծկում էր, կտրտում, անդամահատում, ժահրն ու թարախը հեռացնում, փթած անդամը զատում առողջից»<sup>23</sup> :

Հողվածագրի կարծիքով, գրողի գրական ժառանգությունը Ռուսաստանի համար անանցողիկ նշանակություն ունի, և նրա անունը ժամանակի ընթացքում կհնչի ամբողջ Ռուսաստանով մեկ : Ահա այդ մարգարեական խոսքերը. «Ընդդիմի խարազանի տակ դողում էին, անիծում նրան, սակայն բյուր մարդիկ քրքիջ ու օրհներգ են խնկարկում նրան՝ ժողովուրդի այդ քարեկամին, ճշմարտության զինվորին :

Այսօր այդ մեծ սատիրիկի մահվան տասնամյակը համարյա մոռացությանը հիշատակում են, բայց կանցնեն մի շարք տասնյակ տարիներ, այն ժամանակ հայրենիքի այդ հարազատ զավակի հիշատակը միաձայն կօրհեն ու կղրվատե ամբողջ Ռուսիան»<sup>24</sup> :

Նույն համարում տպագրված է «Թե ինչպես մի ուսմիկ կերակրեց երկու գորապետների» հեքիաթը՝ Վրթանես Փափազյանի թարգմանությամբ :

Հետագա տարիներին հայ քննադատության մեջ առաջին քայլերն են արվում ռուս գրականության մարքսիստական վերլուծության ուղղությամբ :

Սալտիկովի ստեղծագործության մարքսիստական ընկալման ավանդույթների ակունքներում կանգնած է եղել հայ հայտնի հեղափոխական գործիչ և գրականագետ Ստ. Ծահույանը :

Գրողի մահվան 25-րդ տարեդարձի կապակցությամբ 1914 թ. բոլշևիկյան «Մեր կյանքը» շաբաթաթերթի երրորդ համարում Ծահույանը հրապարակում է «Մ. Ե. Սալտիկով» հողվածը, որը 1970 թվականին վերատպվեց «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրում :

Ա. Ոսկերչյանը այս վերջին հրատարակության նախաբանում նշում է. «Հողվածում նախ և առաջ այքի է զարնում նրա մարքսիստական ուղղվածությունը : Հողվածի հեղինակը ոչ միայն քաջ ծանոթ է մեծ երգիծաբանի կյանքին և ստեղծագործությանը, այլև ռուս գրականությանը և քննադատությանը ընդհանրապես :

Այս առումով շատ ընդհանուր գծեր կան այս հողվածի և Լ. Տոլստոյին ու Գորկուն նվիրված Ծահույանի հողվածների միջև :

Հայտնի է նաև, որ Ծահույանը քաջատեղյակ էր Ընդդիմի ստեղծագործություններին և հաճախ դիմում էր դրանց :

Հողվածը, գրված լինելով ռուս գրականության այնպիսի գիտակի կողմից, ինչպիսին էր Ծա-

<sup>21</sup> Վ. Վաղդանյան, նշվ. աշխ., էջ 37 :

<sup>22</sup> «Տարազ», 1899, N 16, էջ 1 :

<sup>23</sup> Նույն տեղում :

<sup>24</sup> Նույն տեղում :

հումյանը, Օլմինսկու՝ Շչեդրինի մասին գրված մինչհեղափոխական գործերի հետ մեկտեղ, կարող է դասվել մարքսիստական գրականության լավագույն նմուշների շարքին»<sup>25</sup>։

Ստ. Շահումյանը Շչեդրինի գրվածքները դիտարկում է նախ և առաջ սոցիալիստական գաղափարախոսության տեսակետից։ Ըստ նրա, գրողի ստեղծագործությունը խարսխվում է ոռու իրականության բացասման վրա, ինչ շատ վաղ ի հայտ եկավ Սալտիկովի գործերում։ «Սալտիկովի սոցիալիզմը, որն աճել է ետոեֆորմյան ոռու իրականության հողի վրա, անհրաժեշտաբար պետք է աղոտ արտահայտված լիներ։ Այդ սոցիալիզմը միանգամայն բավարարում էր երեք բաղադրամասերի ընկալումով, այն է՝ հավասարություն, եղբայրություն և ազատություն»<sup>26</sup>։

Վկայակոչելով գրողի արտահայտած միտքը, որ կանգ առնել գործնական իդեալների վրա՝ նշանակում է կամավոր սահմանափակել իրեն, Շահումյանը գալիս է այն եզրահանգման, որ Սալտիկովը երբեք չէր տարվում ուտոպիստական գաղափարներով։ Սալտիկովի կարծիքով, Չերեխիչևսկին իր «Ի՞նչ անել» վեպում թույլ է տվել սխալ, երբ գործնական կանխատեսումներ է արել։ «Գրեթե բոլոր ուտոպիստ-սոցիալիստները տարվում էին ապագայի պատկերմամբ, ձգտելով իրենց երևակայությամբ կողմնորոշել ժամանակակիցներին դեպի իրենց իդեալը։ Սալտիկովը այդ առումով լիովին հակադիր դիրքորոշում ուներ։ Նրա ստեղծագործություններից ոչ մեկում դուք չեք տեսնի ապագա հասարակության պատկերը։ Փոխարենը՝ նա ավելի ևս ուժգնորեն էր հարձակվում գոյություն ունեցող իրականության վրա։ Ժամանակակից իրողության մութ կողմերի մերկացման գործում նա անողոր էր։ Նրա խարազանող երգիծանքը տառացիորեն չէր խնայում ոչ ոքի»<sup>27</sup>։

Շչեդրինի հետ մեկտեղ Շահումյանը խորհրդածում է այն հարցի մասին, թե որոնք են այն ուժերը, որ պետք է դուրս բերեն Ռուսաստանը «ստրկության թագավորությունից դեպի ազատության թագավորություն»<sup>28</sup>։ Շչեդրինը հետևողականորեն բացատրում է այդ ուժերի առկայությունը հասարակության բոլոր շերտերում՝ և՛ ազնվականության, և՛ չինովնիկության, և՛ առևտրականության, և՛ ժողովրդի մեջ, այն ժողովրդի, որը, Շչեդրինի պատկերմամբ, ոչ թե հարգանք էր հարուցում իր հանդեպ, այլ խղճահարություն։ Ռուս ժողովուրդը Շչեդրինի մեջ «առաջացնում էր խորը վիրավորանքի զգացում, որն իր արտահայտությունն էր գտնում սարկաստիկ ծիծաղի մեջ»<sup>29</sup>։

Շահումյանի վերաբերմունքը ժողովրդի՝ չչեդրինյան պատկերման հանդեպ համահունչ է մեծ դեմոկրատ Դոբրոլյուբովի այդ առիթով արտահայտած մտքերին։ Վերջինս, համեմատելով Գոգոլին և Սալտիկովին, գրում է. «Գոգոլը չկարողացավ մինչև վերջ գնալ իր ուղիով։ Կյանքի ճղճիմությունների պատկերումը սարսափեցրեց նրան, նա չկարողացավ հասկանալ, որ այդ ճղճիմությունը չէ ժողովրդական կյանքի բախտաբաժինը, չգիտակցեց, որ այդ ճղճիմությունը հարկավոր է հետապնդել մինչև վերջ, բոլորովին չվախենալով, որ այդ ճղճիմությունը կարող է վատ ըստվեր գցել ժողովրդի վրա»<sup>30</sup>։

Շչեդրինն իր հետևողական, անզիջում երգիծանքով կարողացավ կյանքի ճղճիմությունների պատկերումը հասցնել մինչև ավարտը։

Պոտենցիալ հեղափոխական ունակությունը նա բացատրում է նաև մտավորականության մեջ. «... 1881 թ. մարտամայա օրերից հետո, օրեր, երբ լիբերալ հասարակությունը, իր ստորաբաղչ էությունը դրսևորելով և կատաղի կերպով սոցիալիստներին հալածելով, ձգտում էր գերազանցել խավարամիտներին, Շչեդրինը երես թեքեց նաև մտավորականությունից. «Ոչ ձայն, ոչ ծպտուն, ոչինչ, բացի մահվան կնիքից»՝ ահա այն խոսքերը, որոնք արտահայտեց Շչեդրինը մահկանացուն կնքելուց առաջ»<sup>31</sup>։

Այսպիսով, ըստ Շահումյանի՝ ակներև է Շչեդրինի ստեղծագործության մարքսիստական էությունը, և նա ողջունում է այն։ Այդ էությունը դրսևորվում է ոչ թե որևէ առաջադեմ գաղափարի հաստատմամբ, այլ գրողի ժամանակակից հասարակական կառուցվածքի մերկացմամբ և մերժմամբ։

Հիմնականում սրանք են հայ մինչհեղափոխական մամուլում եղած տեղեկությունները Սալ-

<sup>25</sup> «Литературная Армения», 1970, N 8, с. 96.

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 97։

<sup>27</sup> Նույն տեղում։

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 98։

<sup>29</sup> Նույն տեղում։

<sup>30</sup> Н. А. Добролюбов. Собр. соч. в 3 тт., М., т. 1, 1986, с. 397.

<sup>31</sup> «Литературная Армения», 1970, N 8, с. 98.

տիկով-Շչեդրինի մասին: Ինչպես տեսնում ենք, նրա ստեղծագործությունը մշտապես եղել է հայ քննադատների ուշադրության կենտրոնում: Հայերեն հրատարակված նրա բոլոր գրվածքները արժանանում էին դրական կամ բացասական գրախոսականների, և անցյալ դարի 80-ական թվականներին արդեն հայ ընթերցողը հնարավորություն է ունեցել հաղորդակցվել ռուս երգիծաբանի ստեղծագործությանը և պատկերացում կազմել նրա մասին:

**А. С. Атагесян - Армянская дореволюционная критика о М. Е. Салтыкове-Щедрине.**  
Говоря об истории публикаций произведений великого русского сатирика М. Е. Салтыкова-Щедрина на армянском языке, автор статьи рассматривает отклики на творчество писателя в армянской дореволюционной печати. Показано, что имя Салтыкова-Щедрина постоянно находилось в центре внимания армянских критиков, и уже в 80-е годы XIX века армянский читатель имел возможность приобщиться к творчеству русского сатирика и составить о нем представление.